

Լեզու գտիր հարազատ եղբորդ կամ քրոջդ հետ

«Եթե որևէ մեկը մյուսի դեմ զանգատվելու պատճառ ունի, շարունակեք համբերել իրար և մեծահոգաբար ներել միմյանց» (Կողոսացիներ 3:13):
Վեճերը հարթելը մի հմտություն է, որը հարկավոր է սովորել, և ընտանիքը Լավագույն տեղն է, որտեղ կարող ես սկսել զարգացնել այդ հմտությունը: Ստորև նշված հարցերի միջոցով գտիր, թե որն է եղբորդ կամ քրոջդ հետ ունեցած խնդրի պատճառը, ապա վերլուծիր այն և փորձիր հարթել:



ԳՏԻՐ ԽՆԴՐԻ ՊԱՏՃԱՌԸ

Եղբայրներիցդ կամ քույրերիցդ ո՞ր մեկի հետ ես ամենից շատ դժվարանում Լեզու գտնել:

Հիմնականում ինչի՞ պատճառով է վեճ ծագում ձեր միջև:

Սովորաբար ինչպե՞ս է զարգանում վեճը:

Եղբայրս կամ քույրս... (նշիր, թե ինչ է անում)

դրա պատճառով ես... (նկարագրիր քո արձագանքը)

դրա հետևանքով... (նկարագրիր հետևանքը)



ՎԵՐԼՈՒԾԻՐ ԽՆԴԻՐ ՊԱՏՃԱՌԸ

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՁՆ ԱՍՈՒՄ Է.

«Ոչ միայն ձեր շահը փնտրեք, այլ նաև ուրիշներինը» (Փիլիպպեցիներ 2:4): Այս խոսքերը ի մտի ունենալով՝ փորձիր վեճին նայել եղբորդ կամ քրոջդ տեսանկյունից:

Եղբայրդ կամ քույրդ գուցե ի՞նչ էր մտածում քեզ հետ վիճելիս:

Եթե եղբայրդ կամ քույրդ իր տեսանկյունից պատմեր, թե ինչից է ծագել վեճը, ի՞նչ կասեր քո մասին:

Նրա ասածներից որի՞ն են համաձայն:

ՀԱՐԹԻՐ ԽՆԴԻՐԸ



Հնարավոր է փոխհամաձայնության գալ կամ գիջումներ անել: Եթե այո, ի՞նչ կառաջարկեիր:

Հաջորդ անգամ ինչպե՞ս դու կվարվես, որ ձեր միջև տարաձայնությունը բուռն վեճի չվերածվի:



ԱՍՏՎԱԾԱՇՆՁՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ներքևում նշված ո՞ր սկզբունքը կարող ես կիրառել, երբ հաջորդ անգամ նմանատիպ վեճի բռնվեք:

- «Սրտանց և ջերմորեն սիրեք իրար» (1 Պետրոս 1:22):
- «Թող ձեր խոհեմությունը հայտնի լինի բոլոր մարդկանց» (Փիլիպպեցիներ 4:5):
- «Մի՛ շտապիր ոգով վիրավորվել, որովհետև հիմարներն են վիրավորանքը պահում իրենց ծոցում» (Ժողովող 7:9):
- «Կովի սկիզբը ջրերի արձակման պես է, ուստի նախքան վեճի բռնկվելը, հեռացիր» (Առակներ 17:14):
- «Փայտ չլինելիս կրակը հանգչում է, և գրպարտող չլինելիս կոխվը հանդարտվում է» (Առակներ 26:20):
- «Ինչո՞ւ ես նայում քո եղբոր աչքի միջի շյուղին, բայց քո աչքի միջի գերանը չես նկատում» (Մատթեոս 7:3):

Գրի առ մի բան, ինչը գնահատում ես եղբորդ կամ քրոջդ մեջ, կամ ինչը քեզ հիացնում է:

ԻՆՉՊԵՐՍ ԴՈՒ ԿՎԱՐՎԵՍ

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՁՆ ԱՍՈՒՄ Է.

«Կա մարդ, որ անմտածված է խոսում և սրի պես խոցում է, բայց իմաստունների լեզուն բուժում է» (Առակներ 12:18):

«Երբ հաչոս երկար ժամանակ պառկած էր հիվանդանոցում, ինձ համար դժվար էր նրան այցելել. քանի որ մեքենա վարել չգիտեի: Եղբորս ասացի, որ ուզում եմ վարորդական իրավունք հանել, բայց նա պատասխանեց, որ ինձ մեքենա վարել սովորեցնելու ժամանակ չունի: Թեև ես նրան բացատրեցի, թե ինչու է դա ինձ հարկավոր, նա բանի տեղ չդրեց ինձ և անտեսեց իմ խնդիրը: Ես հունից դուրս եկա ու եղբորս ասացի, որ նրա համար միևնույնն է, որ ես չեմ կարողանում տեսնել հորս, և որ նա երբեք չի մտածում իմ զգացմունքների մասին: Նա վրդովվեց: Երկուսս սկսեցինք բղավել իրար վրա՝ մեկս մյուսին ասելով, որ անսիրտ ենք» (Կարինա):

Եթե դու լինեիր Կարինայի փոխարեն՝ ինչպե՞ս կհարթեիր այդ իրավիճակը:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵՑ ԿԱՐԻՆԱՆ: «Հաջորդ առավոտ ես ու եղբայրս անկեղծ գրույց ունեցանք: Նա ներողություն խնդրեց, որ այդքան բարկացել էր, և պատմեց, թե ինչ ճնշումների տակ է: Ես չգիտեի, թե ինչքան բան էր թափվել նրա գլխին: Երբ նա պատմեց իր զգացումների մասին, ես ներողություն խնդրեցի, որ փորձել էի ծանրացնել նրա առանց այն էլ ծանր բեռը: Ես լավ մտադրություններ ունեի, բայց այդ մասին խոսելու ժամանակը չէր»:

